ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս հատորը լոյս է տեսնում Հայաստանի Հանրապետութեան Հիմնադրութեան տասնամեակի առթիւ: Հանրապետութեան ամբողջական պատմութիւնը չէ նա: Նման աշխատանք կատարելու համար ես ոչ բաւականաչափ ժամանակ եմ ունեցել տրամադրութեանս տակ, ոչ էլ, մանաւանդ, պահանջուած աղբիւրները — Երևանի պետական դիւանները: Իմ նպատակն էր, տարեդարձի առթիւ, հաւաքել ի մի Հայաստանի Հանրապետութեան ծագման ու կեանքին վերաբերող տեղեկութիւնները, որքան այդ հնարաւոր էր տարագրութեան պայմաններում, տալ ամփոփ գաղափար Հայաստանի Հանրապետութեան մասին: Գիրքը գրելիս ես չեմ ունեցել միտում՝ անպատճառ արձանագրել լաւը և խուսափել վատից: Իմ միակ միտումը եղել է պատմական ճշմարտութիւնը, առարկայական արձանագրութիւնը դէպքերի՝ ջանալով հաւասար պաղարիւնութեամբ ներկայացնել կեանքի բոլոր արտայայտութիւնները:

Հանրապետութեան հակառակորդների կողմից կայ մի յամառ ձգտում՝ ջնջել մարդկանց մտքից ամէն մի յիշատակ, որ կապուած է Հայաստանի անկախութեան շրջանի հետ, մոռացնել տալ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը, սևացնել նրան: Աշխատում են մոռայլ ցոյց տալ անցեալը, որպէսզի ներկան երևայ լուսաւոր: Չէ՞ որ՝ որքան խաւար է գիշերը, այնքան պայծառ են աստղերը: Այս գրքի կոչումն է՝ յիշեցնել մոռացողներին, ինչ որ չպէտք է մոռանալ, ցոյց տալ նոր սերնդին ինչ կեանք ապրեց Հայաստանի Հանրապետութիւնը:

Գիրքը գրելիս ինձ համար աղբիւր են ծառայել նախ՝ իմ, տարիների ընթացքում, հաւաքած նիւթերը, երկրորդ՝ Հ.Հ.Փարիզի Պատիրակութեան «Գործ»-երը, երրորդ՝ Անդրկովկասի Սէյմի արձանագրութիւններն ու վաւերագրերը, չորրորդ՝ Կովկասի ու Հայաստանի մամուլը, հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետութեան նուիրուած հրատարակութիւնները և, վերջապէս, վեցերորդ՝ Հանրապետութեան շրջանի գործիչներից ոմանց տուած գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները, մասնաւորապէս, Ա. Գիւլխանդանեանի, Դրօի, Ս. Արարատեանի, Կուռո Թարխանեանի, Ա.Աստուածատրեանի, Ա.Խոնդկարեանի, Լ.Շանթի, Լ.Նազարեանի, Ց. Տէրունիի, Ղազար Քոչարեանի, Ա. Մարգարեանի, Գ. Բալայեանի, Մ. Օզանեանի, Մ. Թանադոսի, Բէնօի, Ա. Աբեղեանի և ուրիշների: